

# ՔԱՐՈՉ ԽՈՍՄԱԿԱՆ

## Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 հուլիսի 2004 թ.)

*«Տանդերձը գոն թո, լեր մեր իշխան եւ  
կերակուր մեր ընդ թեզ լիցի»:*

*«Դու հանդերձներ ունես, մեզ իշխան  
դարձիր, թող մեր կերակուրը թո հրամա-  
նով լինի»:*

(Եսայի Գ 6)

Միրելի բարեպաշտ բույրեր և եղբայրներ.

Մուրը և անմահ Պատարագի ընթացքին այսօր ընթերցված Ս. Գրային երեք հարվածներից մեկից՝ Եսայու մարգարեությանից վերցված արքահայրությունն է այս. «Դու հանդերձներ ունես, եկ մեզ իշխան դարձիր և նաև կհայթիայթես մեր կերակուրը»: Այսօր երեք ընթերցվածներ մեր խորհրդածությանը հանձնվեցին, որոնց շուրջ մեր Նայրերը խորհել են Կալիս մեզ այս հոգեպարար արարողության ընթացքին: Առաջին ընթերցվածը Եսայու մարգարեության երրորդ գլխից էր, երկրորդը՝ Պողոս առաքյալի՝ Նոմնացիներին ուղղված թղթից, երրորդը, որ հեջեցվեց այս բնմից, Մարթեոս ավետարանչի ԺԴ գլխից էր, որն անվանվում է «Նացի բազմացում»: Երեք այս ընթերցվածները ժամանակագրական առումով իրարից բավականին հեռու են և առաջին հայացքից թվում է, թե չեն կարող որևէ աղերս, որևէ առևտրություն ունենալ, սակայն առավել խորամուխ լինելուց հետո հստակ է դառնում նրանց մեջ արտացոլվող ընդհանուր գաղափարը:

Արդ Կեսեննք, թե ինչի մասին էր խոսում Եսայի մարգարեն: Մարգարե, որ հայրնի էր իր խաբաշունչ բնավորությամբ և նկարագրով, մարգարե, որ հայրնի էր իր անհանդուրժող կեցվածքով մեղքերի հանդեպ և իր մտրակումներով: Ահա նա մտայլ կանխագուշակումներ է կարարում հրեա ժողովրդի մասին: Մարգարեն խորը ողբերգություն է ապրում, երբ Կեսենում է, որ Ասործո սեփական ժողովուրդ կոչված իր ազգը անարդարությունների, գրկանքների, ընկերային հարաբերությունների մեջ Կեսեն գրած չարիքների ու անարդարությունների գոհ է դառնում: Եսայի մարգարեն խորապես ողբում է, որ իր ժողովրդի դարավորները կաշառակերությամբ են սնվում, մարգարեները սնույթիապաշտությամբ են հագնում, նըրանք, ովքեր արդարադատություն պետք է անեին, անարդարությունն են դարձնում իրենց կարգախոսը, այրիները գրկվում են, որբերը՝ անիրավվում, և ահա այս բոլոր անարդարություններին ի Կեսեն նա Ասործո կողմից իրեն հայրնված չափազանց մտայլ մարգարեություններն է փոխանցում իր ժողովրդին, ում՝ դիմելով ասում է. «Քանի որ դուք ձեր ամբողջ մար-

սենժման առարկան դարձրեցիք հացի երկից վազբը, ձեր նյութական ապահովությունը, պիպի գան ժամանակներ, երբ դուք ամբողջապես պիպի թշվառանաք, պիպի գան ժամանակներ, երբ Իսրայելի սիգաճեմ օրիորդները, ովքեր որ զարդարված քայլում էին Սիոնի փողոցներով, պետք է զրկվեն իրենց ամենակարգի գարդ ու նախշից և պետք է զրկվեն նույնիսկ հացից»:

Այդ օրերի համար Եսայի մարգարեն ասում է, թե այն անձը, ով մի կտոր հաց ունենա, հնարավորություն ունենա մյուսներին հացով ապահովել, պետք է գան և ասեն նրան, թե դու հաց ունես, հանդերձ ունես ուսերիդ, եկ և մեզ վրա թագավոր դարձիր: Ահա այսպեղ Եսայի մարգարեն պարզում է մեզ հրեա հասարակության մեջ, և ինչու չէ, ընդհանրապես մարդկանց մեջ տեղ գրած այն մտայնությունը, որ հացը, կեցությունը, հագուստը է առաջնայինը:

Այժմ տեսնենք, թե ինչ է հաջորդում Եսայու այն ընթերցվածին, որ քիչ առաջ ներկայացրեցինք: Մարգարեական այս տողերին հաջորդում են Պողոս առաքյալի խոսքերը: Առաքյալը Նոմնեացիներին ուղղված թղթում նրանց է դիմում ասելով, որ այո, դուք քրիստոնյաներ եք, դուք ընդունեցիք Քրիստոսի լույս հավաքքը, բայց նաև չի կարելի Քրիստոսի նկատմամբ ունեցած ձեր հավաքքը պարծանքի նշան դարձնել, չի կարելի ամբարտապանանալ, չի կարելի մեծամտանալ և նշավակել հրեաներին, ովքեր որ մերժեցին Քրիստոսի հավաքքը:

Քրիստոսի հանդեպ հավաքքը, ասում է Պողոս առաքյալը, դրսևորվում է երկյուղած սիրով, աղոթքով և հավաքքով, և մարդ չպետք է ապավինի իր գործերին, այլ Աստուծո նկատմամբ հավաքքին և այն շնորհին, որով Աստուծո փրկելու է մեզանից յուրաքանչյուրին: Այսպեղ, ահա, Պողոս առաքյալը շեշտադրում է, ի վարքերություն մարդկանց մեջ տարածված մտայնության, հավաքքի գերակայությունը, մարդկանց համար կարևոր է նկատվում հացը, կեցությունը, իսկ Աստուծո կողմից, որ արտահայտվում է Պողոս առաքյալի շուրթերով, էական և կարևոր է նկատվում հավաքքը, հավաքքը Քրիստոսի հանդեպ:

Եվ ահա Պողոս առաքյալի ասածն ամբողջանում է այսօրվա Ս. Գրային ընթերցվածներից կարևորագույնի՝ Մատթեոսի ԺԴ գլխի այն հարվածում, ուր նկարագրվում է հացի բազմացման հրաշքը:

Այժմ անդրադառնանք այդ դրվագին, երբ Քրիստոս քարոզություններից այլևս հոգևած իր աշակերտների հետ քաշվում է անապար, թերևս փոքր-ինչ հանգստանալու: Ժողովուրդը տակավին չհագեցած Քրիստոսի հրաշագործություններից և կարարած բժշկություններից, մատուցած քարոզներից և ուսուցումներից՝ կրկին հեղևում է Տիրոջը և առաքյալներին ու լեռան շուրջ, ինչպես ասում է ավերարանիչը, վերստին մի մեծ բազմություն է հավաքվում, և Քրիստոս Իր աշակերտների հետ նորից կարարում է բժշկություններ, ուսուցանում և քարոզում, և երբ, ինչպես գրում է ավերարանիչը, օրը տարածամել էր, աշակերտներից մեկը մտքենում է Իրեն և ասում. «Վարդապետ, արդեն ուշ է և պետք է, որ մենք այս ամբողջ բազմությանը թույլ տանք, որպեսզի հեռանա իրեն սնունդ հայթայթելու, իր նյութական կարիքները հոգալու համար»:

Քրիստոս պարասխանում է. «Մի՞թե դուք չեք կարող այդ ամբողջ բազմությանը կերակրել»: Աշակերտը անակնկալի է գալիս և պարասխանում, որ «ինչպես կարող ենք այս

ամբողջ բազմությանը կերակրել, որովհետև մեր ունեցածը ընդամենը հինգ հաց է և երկու ձուկ, և հինգ հացով և ձկով բնականաբար չենք կարող այս ամբողջ բազմությանը հագեցնել»: Եվ Քրիստոս, որ իրապես ի սկզբանն գիտեր, թե ինքը ինչ կերպ է վարվելու, նրանց պարզապես միմիայն պատվիրում է, որ բազմությանը խումբ-խումբ նստեցնեն, և այնուհետև՝ ավերարանիչը պատմում է, թե ինչպես այդ հինգ հացով և երկու ձկով ամբողջ բազմությունը կերակրվեց և դրանից հետո փակավիճի փաստերկու զամբյուղ հաց և ձկնեղեն ավելացավ:

Անշուշտ, Ս. Գրային բազմաթիվ մեկնիչներ փորձել են անդրադառնալ, թե ինչպես տեղի ունեցավ այդ հրաշքը, Քրիստոս ինչ միջոցով կարողացավ բազմացնել այդ ամենը և կամ արդյո՞ք բազմացրեց: Որոշ մեկնիչներ ասում են, թե Քրիստոս իրապես բազմացրեց, ուրիշներ ասում են, թե պարզապես մարդկանց հոգևոր բավականության զգացումը այնքան գերակշռող էր, որ նրանց բավարարեց շար չնչին մեկ հաց, սակայն այստեղ էականը ոչ թե այն է, թե ինչպես տեղի ունեցավ հրաշքը, այլ այն, որ հրաշքը տեղի ունեցավ: Եվ եթե հնարավոր լիներ այդ հրաշքը բացատրել, բնականաբար այն կդադարեր հրաշք լինելուց: Այնուհետև Նովիանուս Ավերարանում ասվում է, որ ժողովուրդը հագնալուց հետո, ամբողջ հացի առաքությունը տեսնելուց հետո փորձեց մտքենալ Նիսուսին և Նրան կարգել իրենց վրա թագավոր: Եվ վերստին տեսնում ենք մարդկանց մոտ առաջացած այն մտայնությունը, որ ով հաց ունի, ով կարող է կեցություն ապահովել, նա կարող է նաև թագավոր լինել:

Մտքենում են երկնավոր թագավորին և Նրան ցանկանում են երկրի թագավոր կարգել: Այդ նույնն է, որ գնաս և կալվածարիտոքը առաջարկես իր կալվածքի մեկ մասի վրա տնօրինող լինել: Ուստի հասկանալի է Նիսուսի խորը հիասթափությունը և հուսախաբությունը, թե ինչպես մի ժողովուրդ, որ այդքան շոայտրեն օգտվել էր Իր բարեգործություններից, վերստին չի ընկալում կարևորը և չի կարողանում կարևորը առանձնացնել, փարբերակել երկրորդականից: Եվ այստեղ ահա Ինքը արքայասանում է հետևյալ խոսքերը. «Մա չէ այն հացը, որին դուք պետք է նախընտրություն տաք, այն հացը, որը պետք է փափագելով փափագեք՝ Ես եմ, Ես եմ, որ երկնքից իջել եմ, և նրանք, ովքեր կճաշակեն այդ հացից, որ Իմ մարմինն է, և նրանք, ովքեր կարբենան այն բաժակից, որի մեջ Իմ արյունն է, միայն նրանք կարող են ունենալ փրկություն, միայն նրանք կարող են արժանանալ փրկության»: Եզրափակելով խոսքը՝ Նիսուս ասում է, որ հոգին է կենդանարար:

Ամփոփելով այս ամբողջ պատմումը, թե ինչն է էականը, ինչն է կարևորը նյութի և հոգու հարաբերության մեջ, Տերը վերջնականապես լուծում է այս հարցը՝ ասելով, որ հոգին է առաջնայինը, հոգին է կարևորը և այն էական դերակատարություն ունի մարդու փրկության համար: Ավերարանի մեջ փարբերակվում է երեք հաց. առաջին հացը, որ նյութական հացն է, մեր մարմնական կարիքները, մեր մարմնական պետքերը հոգալու համար, այն հացը, որը փրվեց Մովսեսի կողմից Սինայի անապատում հրեաներին, որ կոչվում է նաև մանա-նա: Երկրորդ հացը, որ Ս. Գրքի մեկնիչների շրթներին ուներ իմաստը աստվածային գերիմաստության, այսինքն՝ իմացական հացը, այն հացը, որը նաև մեր պատմության ընթացքին մեր հայրերը ճաշակել են այդ հացից և մեզ ավանդել բազմաթիվ սրեղծագործություններ, պատմություններ այնպես, ինչպես այդ հացից ճաշակեցին Խորենացին, Ազաթանգեղոսը և մեր մյուս մարենագիրները ու մեզ այսօր մարտցում են իրենց իմացական գի-

